

դադարի գոյութիւն ունենալու։ Բայց իհարկէ երբէք չեմուացուի այն ահագին ծառայութիւնը որ կատարեց 30 տարիների ընթացքում գերմանական պարլամենտարիզմի այդ տաղանդաւոր և անվեհեր մարտնչողը, որի իւրաքանչիւր խօսքը ոուր նետի պէս ցցւում էր Բիսմարկի և Վիլհելմի 11-րդի սրառումը, երբ դրանք փորձում էին զանազան կապանքներ դնել ժողովրդական ազատ ներկայացուցչութեան վրայ կամ ռազմասիրական ֆանտազիաների վրայ մսխել ժողովրդի կապէիները։ Եթէ վերջին տարին նա հիւանդ չլինէր՝ երեխ Մարոկկոյի հարցում Վիլհելմի բռնած դիրքը Ֆրանսիայի նկատմամբ կծու քննադատութիւնների ենթարկուէր Միխտերի կողմից, որովհետև այդ դիրքը սպառնում է ֆրանսկորմանական պատերազմի ուրուականով։ Մարոկկօի հարցը այսօր մեծ մտատանջութիւն է պատճառում ֆրանսիական ժողովուրդին։ Եւ Ռումիէի մինիստրութեան անկման գլխաւոր պատճառը համարում է հէնց այդ հարցը. պարլամենտը պահանջում էր որ Ռումիէն աւելի մօտ ծանօթացնի իր մտադրութիւնների հետ մարոկկան հարցում, իսկ մինիստրը, «ազգային շահերով» արդարանալով, խուսափող պատասխաններ էր տալիս։ Թու չէին և նրա դանդաղ քաղաքականութիւնից եկեղեցական գոյքերի ցուցակագրութեան ժամանակ, 89 հազար եկեղեցիներից միայն 25 հազարի գոյքն է դեռ ցուցակագրուած։ Մայրայեղ ձախակողմեանները երես դարձրին Ռումիէից և նա ընկաւ։ Ֆալիերը նոր մինիստրութեան կազմակերպելը յանձնեց Մարիէնին. կազմուեց աւելի արմատական մինիստրութիւն, որի մէջ արտաքին գործերի պորտֆելը ստանձնեց Լէօն Բուրժուան, իսկ ներքին՝ Ժ. Կլեմանսօ։ Այդպիսով Ֆրանսիայում կառավարութիւնը աւելի ևս արմատական-ձախակողմեան դառաւ, ինչպէս և Ռտալիայում ու Անգլիայում։

Հ. Ս.

Մարտի 1-ին։

### ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՅ ԿԵԱՆՔԻ ՔՐՈՆԻԿԻ

—Զմիրնի Գարաթաշթաղի բնակիչներէն էվէրէկցի Տիկին Մարիամ Գ. Մինանիան նոյն թաղի մէջ իր ունեցած չորս տուները նուիրեր է Ս. Կարապետ եկեղեցին, պայմանով որ իրեն և իր ամուսին մահէն յետոյ, այդ տունների վարձքերէն գոյացած

հասոյթը յատկանայ յիշեալ եկեղեցիի պէտքերին և աղքատ-ներին:

—Մալաթիայի Առաջնորդէն Պատրիարքարան եկած գրութիւն մը կ'իմացունէ որ երկրաշարժի ցնցումները 45 օր շարունակուելէն վերջ դադրած են հիմա և ժողովուրդը հետք-նետէ իր բնակարանները կը քաշուի, մանաւանդ որ ստիպուած է այդպէս ընել, ձմրան խստութեան պատճառով։ Քանի մը հայ ընտանիքներ անպատսպար մնացեր են բնակարան չունե-նալու պատճառով։

—Յունաստանի ներքին գործերի նորընտիր նախարար Տ. Գալօքիրօրուլո հրամայեր է Յունաստանէն արտաքսել այն Հայերը որոնք թիւրք կառավարութեան թելադրութեամբ իւ-րև անիշխականներ ձերբակալուելով բանտարկուած էին, բայց Լամիաի եղեռնադատ ատեասին առջև դատուելով անպարտ հոչակուած ու ազատ թողուած էին։

—Ծ. Օրմաննեան Պատրիարք Վառնալի Թաղ. Խորհրդին ուղղած մէկ նամակովը աչալուրջ ուշադրութիւն կը հրաւիրէ հետեւեալ ծանուցագրին վրայ՝ որ դրկուած է Պուլկարիոյ իշխանին գաղտնի գրասենեակի տնօրէնութեան կողմէ Պուլկարիոյ Պուլկարիոյ գիւանագիտական գործակալին։

«Ի՞ր հետեւանք իմ օգոստ. 26 թիւ նամակին, պատիւ ու-նիմ ձեզմէ խնդրելու որ հաղորդէք Նորին ամենապատւութեան Հայոց Պատրիարքին, թէ ի պատասխան իր խնդրագրին գոր ուղղած էր Ն. Ա. Բ. Իշխանին, իշխանապետութեան Հանրային Կըրթութեան Նախարարութիւնը նկատողութեան առնելով պահանջիլի յատկութիւններով օժտուած ընտրելիներու, պիտի շաբունակէ ինչպէս անցեալի մէջ թոյլատութիւններ ընել Պուլկարիայի մէջ հայ վարժարաններու ուսուցիչներու մասին, հակառակ կրթական օրէնքին 58, 157 և 199 յօդուածներուն. բայց սակայն, բաղձալի է որ Ս. Պատրիարքը հարկ եղած մի-ջոցները ձեռք առնէ պատրաստելու համար օրէնքի պահանջիրին համապատասխանող մարդիկ, և ամեն տարի չմնդրել թոյլատութիւններ՝ որոնց շնորհուաը կրնայ օր մը մերժել նախարարութիւնը, որովհետև օրէնքը այդ մասին յստակ է։ Տոպղովիշ

Այս ծանուցագիրը, ինչպէս յայտնի է, կը վերաբերի հայ վարժարաններու մէջ հայ ուսուցիչներուն առանց պուլկարա-կան վկայականի պաշտօնավարելու կենսական խնդրին, որուն շարունակմանը մասին Տ. Օրմաննեան Պատրիարք քանից գիւ-մումներ ըլքած է Պուլկան կարավարութեան, և ինչպէս կերեւ նայ նախարար Տոպղովիշի ծանուցագրէն՝ օրէնքը այսուհետև

պիտի կրնայ օր մը յանկարծ գործադրութեան դրուիլ՝ առանց յետաձըգումի:

—Այսթապի ամերիկեան գոլէճը, որ բժիշկներ և գիտուն աշակերտներ հասցնելով կելիկեայի համար բարիք մը եղած էր, հրդեհի ճարակ եղեր է բոլորովին. Շէնքը ապահովագըր-ուած էր:

—Պ.Մ. Ֆարհատ Լոնդոնից գրում է «Խազմիկ» թերթին հետեւալը այս պ. Շիրազի մասին, որ յայտնի դեր խազաց բա-գուի թուրքերի «համիսլամական պատմութեան» հարցում.

«Ատենէ մը ի վեր Ուազմիկի մէջ կը կարդամ Շիրազի անուն անձի մը ձերքակալման շուրջը «գործալական» տեղե-կութիւններու Լաւ պիտի ըլլար եթէ ձեր ընթերցողները ստոյդ տեղեկութիւններ ունենային այդ տիրահոչակ անձնաւորու-թեան մասին:

«Շիրազի» վերադիր անուն է, իսկական անունն է Հովել-Կալա-Մուչի. Ան հայ չէ, այլ պարսկաստանցի Ասորի մը՝ կրթուած Թաւրիզի Արամեան դպրոցը: «Խան» տիտղոս բնաւ չէ ունիցած: Խլիսլորնտիք Լօնտօն Նիլզի հինգ տարի առաջ թղթակից եղած է, ներկայիս մէջ առանց որ և է կապ ունե-նալու, ինչ որ հաստատած եմ: Յեղափոխական չէ բնաւ և պատճառներ ունինք յայտնելու, որ թուրք ոստիկանութեան աջակցելու խրկուած է Լօնտօնի Օսմանեան դեսպանատան կողմէ:

Վերջերս Լօնտօնի Պարսկական Ազգային Պանքը արտօ-նած է ձերքակալելու այս սրիկան, որ Պարսկական հիւպատո-սին յանձնարարականով չորթած էր յիշեալ դրամատունը:

Ասկէ եօթը տարի առաջ Պարսկահայ ձեսնալով մեր ըն-կերութեան 25 շլինը կոկորդը անցուցած է և վերջին դատա-վարութեան անյայտացաւ. տողիմաններ կան մեր ձեռքին տակը և պահանջել հարկին կրնանք հրապարակ հանել: Յիշ-եալը կատարեալ ճարպիկ խաչագոր մըն է, որմէ աւելի դեր-ազանցը գուցէ անկարելի է որ գոյութիւն ունենայ, որովհե-տեւ խիստ ճարպիկ, լեզուագէտ և զարգացած է միանգամայն, ափսոս սակայն որ վտանգաւոր:

—1905 Դեկտ. 31-ի մարդահամարին համաձայն՝ Պուլկա-րիոյ բանակչութեան թիւը կը հասնի 4,200,000-ի, մինչդեռ 1900-ի մարդահամարը 3,700,000-ի կը հասցնէր: Ալս հաշուով 5 տարուան մէջ Պուլկարիոյ բնակչութիւնը կէս միլիօն աւե-լացած է: Հայերի թիւը Բոլղարիոյ մէջ 15 հազարի չափ է:

—Լոնդոնում սկսաւ լոյս տեսնել խմբագրութեամբ աշ-խարհածանօթ «Խէվիլու ավ Խէվիլուզար խմբագիր Պն. Ուրիիը

Սթէտի որդուն Պս. Ա. Սթէտի, և աշխատակցութեամբ այլ նշանաւոր անձերու անգլիերէն «Բրօ Արտեմիա», Շաւալով, պարունակութեամբ կամ ուղղութեամբ Փրանսական «Բրօ Արմէնիա»ին կը նմանի և վատահ ենք որ իր անժխտելի օգուտները պիտի ունենայ:

—Խարբերդի երկրաշարժը պատահած է նոյ. 21ի (ը.թ.) ցերեկը, ճիշտ կէս օրի ատենները և տեած է 21 վայրկեան: Նամակներէ կ'իմանանք որ Խարբերդի դաշտին մէջ ամենէն շատ մասսուած գիւղերը եղած են՝ Դատեմ, Մորենիկ և Քէսրիկ, մանաւանդ այս վերջինը: Տուները մեծաւ մասսամբ փլած և կամ անբնակելի դարձած են, իսկ անձի կորուսոր, բարեբաղպարար, շատ անշան եղած է: Գիւղին կեղրոնական մասը և Ճօրճոր ենց տան շրջակայքը ամենէն գէշ մասսուած վայրերն են: Քէսրիկի եկեղեցին՝ որ իւր մեծութեամբ, ճարտարապետական գեղեցկութեամբ և հոյակապ զանգուածով ամբողջ Թուրքիոյ մէջ նշանաւոր է, հիմա կիսաւեր վիճակ մը կը ներկայացնէ: Գմբեթը, կամարները, խորանը և խորանի ետեի պատը մասամբ փլած և վար թափած են, իսկ ամբողջ եկեղեցին խարխլած է և բոլորովին անապահով դարձած հաւաքումի և աղօթատեղիի համար:

Խարբերդի գիւղօրայքը մեծաւ մասսամբ անմասս են, իսկ շրջակայքի վիճակը, նամակադիր մը այսպէս կը տեղեկագրէ: «Ի՞զոլ և շատ մը բիւրտի գիւղերը, Թուրքլի-Քէօյ, Խան-Քէօյ, չափազանց վասառեր են, և կ'սուի թէ՛ Քէօմիր-Խան լեռ մը ճեղքուած մուխ ու կրակ կ'ելլէ: Փէթիրկէ, Այվազ, Շիրոյ և աւրիշ տեղեր անթիւ վասաներ, մինչ իսկ ձորի մը մեջ գիւղ մը բոլորովին կորսուած է երկու լեռ իրարու գալովք»:

Նշանակելի է որ երկրաշարժը տակաւին դադարած չէ, պարբերական շարժումներ ամեն օր տեղի կ'ունենան: Նոյ. 27 ին՝ Մալաթիա սաստիկ ցնցում մը տեղի ունեցեր է, և առնուած տեղեկութեանց նայելով, «500 տունէն աւելի կորսուած, 3 մզկիթ և կառավարատունը բոլորովին վասսուած և 90 մարդէն աւելի մեռած ու վիրաւոր գտնուած են: Խարբերդէն բժիշկ և ուղօրենայք դրկուած են»:

Խարբերդ այժմ ժողովուրդը ահ ու սարսափի մէջ կ'ապրի: Դպրոց և եկեղեցիի բացում արգիլուած են կառավարութեան կողմէն՝ կեանքի մեծկակ և հաւաքական կորուստ մը տալու վախէն, կառավարութիւնն ալ նոյնիսկ իր նիստերը դադրէցուցեր է: Ժողովուրդը ապահով չզգար կանգուն մնացող տուներու մէջ պատսպարութիւն և քաշուած արտերը՝ փալասներէ ու կապերտներէ վրան շինելով, անոնց տակ կը բնակի: Կառա-

վարսւթիւնն իր տրամադրութեան տակ եղած զինուորական վրաններով ժողովուրդը կարելոյն չափ պատսպարեր է, և կ'ըսուի թէ հիւղակի (ինուղ) նման բաներ մալ կ'ուտայ որպէսս զի մնացածներ ալ անոնց տակ պատսպարուին։ Առետուր, գործ և արտադրութիւն դադար առած են։

—Փետրուարի 23-ին Լոնդոնում ի նպաստ Թիւրքիայի ճաշուած ժողովրդների տեղի ունեցու յայտնի Փրանսական գործիչ Դ'Էտուրնէլ դը Կոնստանտի նախագահութեամբ կոնֆերինցիա, որին մասնակցեցին Անկլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և այլ եւրոպական երկրների նշանաւոր գրական և քաղաքական գործիչնոր անձամբ կամ ուղարկած նամակներով։ Հասարակական կարծիքը՝ միշտ լարուած պահելով Արևելքի կոնքու հարցի վրայ այդ կոնֆերենցները անշուշտ որոշ նախապատրաստական դեր են կատարում։

—Հայ յեղ. Դաշնակցութեան Ամերիկայի օրգան «Հայրենիք» շաբաթաթերթը այդ տարուայ № 1 (339)-ի մէջ «համհայութիւն (panarmenisme)» խորագրով առաջնորդում հետևեալ կերպով է բնորոշում այդ ուղղութիւնը։

### Համհայութիւնը (Panarmenisme)

Համիսլամութիւն, համասլաւութիւն, համագերմանութիւն — ազգանշանները եղան, իւրաքանչիւն իր ծննդեան վայրին մէջ — կծու ազգամոլութեան մը, օտարատեցութեան մը։

Գերմանացիք տիեզերական տիրապետումի մը տեսնը ունեցան, աչքերնին ուղղելով ոչ միայն Աւստրիա, այլ և մինչև Փոքր Ասիա արևելքէն, և մինչև Պրազիկ՝ արևմուտքէն։ Գիտութեամբ ու գրականութեամբ տիրապետումը չէր բաւեր անոնց։ Սէտան ու Սատօվան անոնց ախորժակը գրգոնցին։

Ռուս կառավարութիւնը, ոլավասէրներու ջոկատի մը առաջնորդութեամբ, պահ մը երազեց ձուլել իր մէջ Լեհաստանէն մինչև ամբողջ Պալքանեան թերակղղին, Բիւղանդիոնը վերականգնել, մօտիկ ապագային կլլել պատրաստուելով նաև յոյները։

Իսկ սուլթան Համիտ նոր խալիֆայութիւն մը ստեղծելու յոյսով, ահա կ'աշխատի տարիներէ իվեր, գրգռելով աշխարհի բոլոր միւսիւլմանները քրիստոնեաններուն դէմ։ Ճիկ կը թափէ ինքինքը ընդունել տալու հրամանատարը Խոլամ աշխարհին։

Հայը, բաժնուած երեք հատուածներու, Ռուսիա, Թիւրքիա, Պարսկաստան — այդ երեք շարժումներու գրեթէ ներդաշնակ հարուածներուն տակ ինկաւ։

Թէ ռուս թէ թիւրք և թէ գերման կառավարութիւնները

պահ մը համաձայնեցան Փոքր Ասիան հայերէն պարզըւած տեսնելու։ Ամէնքն ալ իրենց զատ հաշիներն ունէին՝ այդ գաւառները իրենց տիրապետութեան յատկացնելու համար։

Համբուլամութիւն և համասլաւութիւն մասնաւորապէս ներդաշնակեցին իրենց գործողութիւնները—ատոնց հետևանքն էր 1895 ի ջարդերը Հայաստանի մէջ, և 1905ի հայաթաթար Կոինները Կովկասի մէջ։

Հայը հալածուած էր իր պատմական հայրենիքին մէջ, իր ընակած հողին վրայ—Փոքր Ասիոյ մէկ ծայրէն միւսը, որով հետեւ հայ էր։ Կը հալածուէր ոչ իր կրօնքին, իր հարստութեան, իր ընկերական գիրքին համար—հայ ժողովրդին բոլոր խաւերը կը հալածուէին անխտորոշէն, հարուստ քաղաքացիէն մինչև աղքատ գիւղացին, եկեղեցականէն և ուսեալէն մինչև տգէտ բանուորը—միայն անոր համար որ հայ էին։

Որովհետեւ հայը հոգեվարք ժողովուրդ մը չէր, ընկերային կեանքի հտէալ մը ունէր։

Սալին և մուրճին միջև ինկած էր հայը։ Եւ ահա, ընականօրէն, անզգալի կերպով, կամաց կամաց, մօտեցան իրարու հայութեան անջատ հատուածները—ուսահայ, տաճկահայ և պարսկահայ համոզուեցան որ, իրենց փրկութիւնը իրենց միարան գործակցութեանը մէջն է—թէ հայուն շահերը ներդաշնակ են, որ կառավարութեան ալ հապատակ ըլլայ ան, թէ բոլոր հատուածներու հայերը դաշնակցենու են—քանի որ մեր թշնամինները դաշնակից են՝ մեզի ջախջախելու իրենց ծրագրին մէջ։

Այս գաղափարի զարգացումին օգնեց գրականութիւնը, իրականացումին՝ Հայ Յեղափոխական Կազմակերպութեանը։

Հայրենիքի բացասումը ջատագովող, այս կամ այն մասնաւոր դասակարգի շահերը պաշտպանող վարդապետութիւնները չեն հայութեան մէջ ղեկավար գաղափարը—այլ բոլոր դասակարգերուն նուրբական շահը՝ հայրենի օճախին պաշտպանութեան և զարգացումի գաղափարն է որ կ'ոգեսրէ և շունչ կուտայ ամէնուն։

Օճախ՝ իր ամէնէն լայն իմաստով՝ հայ մարդը տէր իր հողին, իր աշխատանքին, իր կեանքին, իր պատուին և իր ընկերային իտէալներուն։

Եւ այսօր, 1906 ի սկզբին, եթէ տակաւին արտասանուած չէ ՀԱՄԱՀԱՅՈՒԹԻՒՆ, բայց իբր բաղաքական ծրագիր մը—բայց հայուն գիտակցութեան մէջ բուն դրած է արդէն։ Վաղուան նշանաբանն է ան։

Ազգայնական ծրագիր մըն է ատ բառին վսեմագոյն ըմ-

բռնումին մէջ—իրար փոխադարձաբար պաշտպանելու, և ոչ  
օտարը տարամերժաբար հալածելու վարդապետութիւնը՝ որ:

Ահա այս մեծ գիծը, որ կ'անջատէ համահայութիւնը՝ հս-  
չիւնով նման, բայց նպատակով հակոտնեայ համասլաւութիւն,  
համագերմանութիւն և համիսլամութիւն կոչուող անհամակրելի  
ու վտանգաւոր շարժումներէն»:

Ինչպէս տեսնում էք «պանարմենիզմ» խօսքը Ովկիանոսի  
այս կողմում այնպիսի ցասում և զայրոյթ չի յարուցանում,  
ինչպէս այս կողմում...

## ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Սօխառանի, ժողովրդական, տըն-  
տեսական, գիւղացիական շաբաթա-  
թերթ.—Դիւղանանեն պ. Ա. Աթա-  
նասեանի խմբագրութեամբ հրատա-  
րակուող այս նոր թերթի նպատա-  
կը պարզ է վերև բերուած նրա վեր-  
նագրից: Դիւղը և գիւղացիութիւնը  
պէտք է լինի այդ օրգանի մտածո-  
ղութեան զիստաւոր առարկան: Մինչև  
այժմ լոյս տեսած 7 համարներում  
բաւական պարզուել է այդ շաբա-  
թերթի պլոգրեսիսի աշխարհա-  
յեացը շօղափուած հարցերի մէջ:  
սակայն մի քանի յօգուածների լի-  
ուուն, նիւթը, զատողութիւնների  
վերացականութիւնը աելի յարմա-  
րեցրած են ինստելիգենտ քաղաքա-  
ցիների, քան մեր խեղճ գիւղացինե-  
րի ըմբռնողութեան: Մատչելիու-  
թեան կողմից լաւ են «Դիւղատանա-  
սութիւն» բաժնում Ազգոնոմի «զը-  
րոյցները»: Արդէն բոլորովին քա-  
ղաքում ապրող՝ այն էլ որոշ ախովի  
դրականասէրների ճաշակին՝ վայել են  
պ. Ստորակէտի սրախօսական յա-  
ւակնութիւնները, որոնք գիւղացու  
համար բոլորովին անպէտ բաներ

են և որոնց փոխարէն աւելի նպա-  
տակայամար կը լինէր տալ օգոտա-  
կար գիւղելիքներ, խորհուրդներ,  
գիւղացիական հարցերի պատաս-  
խաններ:

Ճօվիւնոգնոր-բարոյական, պատ-  
մական, հաստրակական և մանկա-  
վարժական շաբաթաթերթ.—Եղնիկ  
ք. Երզնկեանի այդ թերթը եր գը-  
խաւոր նպատակն է զըել մեր եկե-  
ղեցու, հոգմորականութեան և դըպ-  
րոցների շուրջը պատող հարցերի  
քննութիւնը: Առայժմ շաբաթաթեր-  
թի մէջ աշխատող գիւղաւոր ոյժերն  
են Ս. Մ., Արսէն վ., Բենիկ վ., Գր.  
ք. Երզնկեան, Եղ. ք. Գեղամեան և  
Բարգուղիմէու եպ. Գէորգէան: ՀՀո-  
վիւր կարծես լրացնում լինի «Արա-  
րատը»: Ով հետաքրքրուում մեր կը-  
ղերի, եկեղեցու և դպրոցի հարցե-  
րով՝ նա այդ շաբաթաթերթի մէջ  
կը գտնի նիւթեր և որոշ աշխար-  
հայացքով լուսաբանուած դատողու-  
թիւններ, վատ չէ ունենալ մի այդ-  
պիսի օրգան, որի մէջ կենարոնա-  
նան մեր իրականութեան մէջ բա-